

Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՎՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆՅԱՆԻ

ԺԲ.00.04- «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Մերի Կարենի Խաչատրյանի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է հարաբերականորեն նոր ինստիտուտներից մեկի՝ ապօրինի ծագում ունեցող գույքը քաղաքացիական դատավարության կարգով բռնագանձելու կառուցակարգի առանձնահատկություններին

Ատենախոսության թեմայի արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է հայրենական իրավաբանական գրականության շրջանակներում խնդրո թեմային վերաբերելի համընդգրկուն գիտական ուսումնասիրության բացակայությամբ Բացի այդ, դատական պրակտիկայում կան մի շարք խնդրահարույց հարցեր, որոնց առկայությունը մի կողմից օրենսդրական հատուկ կարգավորումների բացակայության, մյուս կողմից վարույթում շահագրգռված անձանց իրավունքների օրենսդրական երաշխիքների բացակայության հետևանք են Ուստի թեմայի

արդիականությունը պայմանավորված է ոչ միայն ընտրված հիմնահարցերի հրատապությամբ և դրանց գիտական նշանակությամբ, այլև իրավակիրառ գործընթացի բարելավման անհրաժեշտությամբ

Նկատենք նաև, որ թեև ՀՀ-ում կան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտին վերաբերող որոշ հարցերին նվիրված հետազոտություններ, սակայն սույն ատենախոսությունը առաջին և համապարփակ աշխատությունն է, որն անդրադառնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացակարգային հարցերին, ուստի կատարված հետազոտությունը հավակնում է ունենալ կարևոր նշանակություն քննարկվող վարույթներով գործի քննության արդյունավետ գործիքակազմ ապահովելու և միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար

Աշխատանքում ատենախոսի կողմից առաջարկվել և հիմնավորվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերի քննության տարբերակված կարգ նախատեսելու անհրաժեշտությունը հայցադիմումի ընդունելիության, ապացուցման բեռի բաշխման, հայցի հիմքի հիմնավորվածության գնահատման ընթացակարգային նորմեր սահմանելու և այլ հարցերում

Ատենախոսության առջև դրված խնդիրների և նպատակների լուծման համատեքստում հեղինակը ուսումնասիրել է ոլորտի տեսական գրականությունը, հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգեր նախատեսող միջազգային պայմանագրերը, ներպետական և օտարերկրյա մի շարք պետությունների օրենսդրությունը, դատական պրակտիկան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ դրանով իսկ ապահովելով տեսագործնական հենք առաջադրված տեսական ու գործնական հարցերի կարգավորման համար:

Աշխատանքում հեղինակը քննարկել է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վերաբերյալ միջազգային պրակտիկայում կիրառվող մոդելները, *in rem* (գույքի դեմ) հայցի էությունը և քննության դատավարական ձևերը, համեմատական անցկացրել հայրենական իրավական համակարգում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դատավարական ձևի առանձնահատկությունների հետ՝ ներկայացնելով ոլորտի առաջադեմ միջազգային փորձը

Հեղինակին հաջողվել է ընդհանուր գիտական և մասնագիտական հատուկ մեթոդների համակցված կիրառմամբ հետազոտության առարկա դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող առավել արդիական հարցադրումները և առաջադրել դրանց լուծումներ:

Մասնավորապես՝ հարկ ենք համարում առանձնացնել հեղինակի այն մոտեցումները, որոնք վերաբերում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց ներկայացնելուն նախորդող մինչդատական փուլի իրավական նշանակությանը հայցադիմումի ընդունելիության և վեճի լուծման օրենքով սահմանված արտադատական կարգը պահպանված լինելու հարցերի քննարկման շրջանակներում Նշվածը առանցքային է այն տեսանկյունից, որ օրենսդրական գործող կարգավորումները և դրա վրա հիմնված դատական պրակտիկան կարծես անտեսում են վարույթի մինչդատական փուլում իրավասու մարմնի՝ Օրենքով սահմանված գործողությունների կատարման իրավաչափության գնահատման անհրաժեշտությունը վարույթում շահագրգռված անձանց իրավունքների իրացման համատեքստում

Արժեքավոր ենք համարում նաև հեղինակի կողմից առաջ քաշված այն գիտական դրույթը, որով առաջադրվում են հանցավոր գործունեության և գույքի ձեռք բերման միջև անուղղակի պատճառահետևանքային կապի առկայությունը դատարանների կողմից գնահատելու չափանիշներ Կարծում ենք, որ նշված մոտեցման կարևորությունը դրսևորվում է վարույթում հանրային և մասնավոր շահի հավասարակշռությունն ապահովելու անհրաժեշտությամբ, քանի որ հակառակ պարագայում վերանում է այն նպատակը, ի շահ որի օրենքով կարող էր սահմանափակվել անձի սեփականության իրավունքը

Արժանահիշատակ է հեղինակի կողմից նշված իրավական խնդրի դիտարկումը իրավունքի գերակայության սկզբունքի քննարկման համատեքստում և հեղինակի եզրահանգումը այն մասին, որ դատարանը գործի քննության ընթացքում պետք է անդրադառնա իրավունքի գերակայության սկզբունքի և կիրառվող օրենսդրության համատեղելիությանը՝ նախապատվությունը տալով իրավունքի գերակայությանը Նշվածը ընդգծում է իրավունքի գերակայության սկզբունքի առաջնահերթությունը կիրառվող օրենսդրության նկատմամբ

Ատենախոսության նյութը ներկայացված է հստակ և ամբողջական, աշխատանքը գրված է մասնագիտական գրագետ լեզվով և ռճով, գիտական բարձր

մակարդակով և տրամաբանական հաջորդականությամբ՝ հնարավորություն տալով պատկերացում կազմել առանց մեղադրական դատավճռի գույքի բնագանձման ինստիտուտի մասին Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները պարունակում են գիտական նորույթ և արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով յոթ գիտական հոդվածներում Ատենախոսության կառուցվածքը նույնպես հաջողված է, իսկ ընտրված հարցադրումների շրջանակը հնարավորություն է տվել ապահովելու նաև նյութի ամբողջականությունը և եզրահանգումների հիմնավորվածությունը:

Վերոնշյալով հանդերձ՝ կցանկանայինք ատենախոսի ուշադրությունը հրավիրել աշխատանքում նկատված առանձին հանգամանքների վրա, որոնք մեր գնահատմամբ կարիք ունեն լրացուցիչ դիտարկման ու պարզաբանման

Այսպես՝

1 Ատենախոսության 3-րդ գլխի 1-ին պարագրաֆում ատենախոսը անդրադառնում է պաշտպանության հայցային միջոցների տնօրինման հետ կապված իրավունքներին, մասնավորապես՝ իրավասու մարմնի՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելու դատավարական իրավունքին Ատենախոսը, վերլուծելով Օրենքի վերաբերելի կարգավորումները, ուսումնասիրության արդյունքները ամփոփող եզրակացությունը համարել է իրավասու մարմնի կողմից հայցադիմում ներկայացնելու հիմքը և հետևություն կատարել, որ ապօրինի ծագում ունեցող դիտարկված գույքի բնագանձման վերաբերյալ հայցը նոր պահանջներով կամ նոր փաստական հիմքերով լրացնելու՝ իրավասու մարմնի իրավունքը ևս սահմանափակված է ուսումնասիրության իրականացմամբ և դրա շրջանակներում հայտնաբերված գույքի սահմաններում Նշվածը ամփոփելով՝ ատենախոսը եզրակացրել է, որ իրավաչափ չի կարող համարվել ուսումնասիրությունը ավարտելուց և հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո պատասխանողին ուղղված հայցը այնպիսի պահանջներով և/կամ հիմքերով լրացնելը, որոնք ուսումնասիրության ընթացքում չեն պարզվել և ուսումնասիրությունը ամփոփող եզրակացությամբ վեր չեն հանվել:

Չնայած ատենախոսը անհամաձայնություն է հայտնել պրակտիկայում դատարանների ցուցաբերած հակառակ մոտեցմանը, սակայն այս առումով աշխատանքը կշահեր, եթե ատենախոսի կողմից սույն հիմնահարցի շրջանակներում քննարկվեր ոչ միայն հայցի հիմքի և առարկայի փոփոխության մասով իրավասու

մարմնի կողմից ուսումնասիրություն կատարված լինելու հանգամանքը, այլ նաև հայցի փոփոխության ինստիտուտի հիմքում դրված կոնկրետ շահի դատական պաշտպանության գաղափարը այն տեսանկյունից, թե արդյոք նման փոփոխությունը հանգեցնելու է այդ շահի փոփոխության, թե ոչ:

2 Ատենախոսության 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆում հեղինակը անդրադարձ է կատարել գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականությունը պատասխանողին փոխանցելու մոտեցմանը, ինչպես նաև տվյալ հարցը կարգավորող միջազգային կոնվենցիաներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած դատական պրակտիկային Հեղինակը, ուսումնասիրելով չբացատրվող հարստացման մոդելը կիրառող երկրներում գործող ապացուցման կանոնները, հիմնավորում է գույքի ձեռք բերման աղբյուրի հավանական վարկածների մրցակցության պայմաններում հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի ներդրման անհրաժեշտությունը

Հարկ ենք համարում նկատել, որ առաջարկվող ապացուցողական չափանիշը եապես տարբերվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում գործող ապացուցողական չափանիշից, քանի որ փաստական հանգամանքի առկայությունը հաստատելու համար դատարանը պարզում է ապացույցների համակցության բավարարությունը, իսկ փաստը վիճելի մնալու բացասական հետևանքը կրում է այդ փաստը ապացուցելու պարտականություն կրող կողմը Մինչդեռ հավանական վարկածները գնահատելու դեպքում դատարանը պետք է ղեկավարվի ենթադրությունների ողջամտությամբ. Այսինքն՝ անզուսաքսոնական իրավական համակարգից փոխառված այս չափանիշը կիրառելիություն չի ունեցել ներպետական դատավարագիտության մեջ, ուստի նման չափանիշի ներդրումը կարող է հանգեցնել տարընկալումների և պրակտիկայում ոչ միասնական մոտեցումներ ցուցաբերելուն

Տվյալ պարագայում, կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը մասնավորեցներ հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշի գործնական կիրառման պայմանները, ներկայացներ այլ երկրների դատական պրակտիկայում առավել հավանական փաստերին նախապատվություն տալու չափանիշները, ինչը կօգներ նշված չափանիշը ճիշտ ընկալելու և կիրառելու հարցում

3 Հանցավոր գործունեության և բռնագանձվող գույքի միջև պատճառահետևանքային կապի առկայության պարզման անհրաժեշտությանը անդրադառնալիս՝ ստենախոսը հիմնավորում է, որ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքները չեն կարող սահմանափակվել միայն գույքի արժեքի և օրինական եկամուտների էական անհամապատասխանությունը վկայող փաստերով, այլ նաև պետք է ներառեն հանցավոր գործունեության հետ թեկուզև անուղղակի առնչության ենթադրությունները հիմնավորող փաստական տվյալներ

Համաձայնելով հեղինակի առաջարկած մոտեցմանը՝ այդուհանդերձ, հարկ ենք համարում նկատել, որ նշվածի համատեքստում վիճելի է համարվում ուսումնասիրությանը նախորդող ավելի քան երեսուն տարիների ընթացքում անձի կողմից ձեռք բերված գույքերի օրինականությունը ապացուցելու պահանջը, ինչը զգալիորեն բարդացնում է անձի կողմից իր գույքի օրինականությունը ապացուցելու գործընթացը՝ ընդհուպ մինչև նրան զրկելով այդ հնարավորությունից Ոստի կլրախուսվելը աշխատանքում առավել հանգամանալից անդրադառնալ նշված ժամկետի ողջամտությանը՝ միաժամանակ քննարկելով այդ ժամանակահատվածում տնտեսական լուրջ փոփոխությունների, ապրանքադրամական շրջանառության թերի փաստաթղթավորման և նմանատիպ այլ հանգամանքների պայմաններում գույքի օրինական ծագումը ապացուցելու պարտականություն սահմանելու իրավաչափությունը.

Նկատառումների շարքն ավարտելով՝ ցանկանում ենք շեշտել, որ այդպիսիք ունեն բանավիճային բնույթ, դրանց առկայությունը չի ստվերում կատարված աշխատանքի արժանիքները, գիտական հիմնավորվածությունը և կարևորությունը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Մերի Կարենի Խաչատրյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Այօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև» վերտառությամբ թեկնածուական ստենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ -ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, և հեղինակն արժանի է ԺԲ 00 04 «Դատական իրավունք՝ դատաբանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական

դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈՎՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ս. Դիլբանդյան

14.12.2024թ.

«Ս. Դիլբանդյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

